Ուսումնական պլան

7-9-րդ դասարանների համար

Նախագիծ

| Ուսումնական դասընթացներ | Տարեկան ժամաքանակ | | |
|---|---|---|---|
| | VII | VIII | IX |
| Հայոց լեզու | 144 | 144 | 144 |
| Գրականություն | 72 | 72 | 72 |
| Ռուսերեն | 72 | 72 | 72 |
| Անգլերեն | 108 | 108 | 108 |
| Հանրահաշիվ | 72 | 72 | 72 |
| Երկրաչափություն | 72 | 72 | 72 |
| Ֆիզիկա | 72 | 72 | 72 |
| Քիմիա | 36 | 36 | 36 |
| Կենսաբանություն, էկոլոգիա | 72 | 72 | 36 |
| Պատմություն | 72 | 72 | 72 |
| Աշխարհագրություն | 36 | 36 | 36 |
| Հասարակագիտություն | - | - | 72 |
| Արվեստ, երաժշտություն | 72 | 72 | 72 |

| | | | |
|---|---|---|---|
| Տեխնոլոգիա, այդ թվում՝ մեդիա | 72 | 72 | 72 |
| Մարմնակրթություն և անվտանգ կենսագործունեություն | 108 | 108 | 108 |
| Սովորողի ընտրած գործունեություն | 144 | 144 | 144 |
| Ընդամենը | 1224 | 1224 | 1260 |
| Լրացուցիչ կրթություն | 108 | 108 | 108 |

Ուսումնական պլանի պարզաբանումներ

1. Ուսումնական պլանը «Ստեղծողի դպրոց. Անհատի կրթական պատվեր. մեդիակրթություն» (պետական այլընտրանքային) կրթական ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելվածն է:
2. Ծրագրի 7-9-րդ դասարանները գործում են Միջին դպրոցի և Հիմնական դպրոցի կազմում:
3. 7-9-րդ դասարաններ ընդունվում են համապատասխան դասարանների սովորողները, ում ծնողներն ընտրում են Ծրագիրը և սահմանված կարգով կնքում են պայմանագիր ուսումնառության մասին:
4. Դասարանում ուսուցումը կազմակերպվում է էլեկտրոնային գրատախտակով կամ էլեկտրոնային գրիչներով: Դասավանդողը և սովորողը դպրոց են գալիս անհատական նեթբուք-նոթբուքով:
5. Դասարանում սովորողների խտությունը 20-22 է: Սովորողի ընտրությամբ գործունեության դասընթացները կազմակերպվում են 12-15 հոգիանոց խմբերով:
6. Ուսումնական պլանի պարզաբանումներում նշված կարգերը ուսումնական պլանի հավելվածն են: Դրանցում փոփոխությունները դպրոցի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է կրթահամալիրի տնօրենը:
7. Սովորողի առաջադիմությունը, ուսումնական արդյունքները, սովորողի մասին անհրաժեշտ այլ տեղեկություններ սահմանված կարգով էլեկտրոնային գրանցում են ստանում:
8. Ուսումնական տարին կազմակերպվում է կրթահամալիրի տարեկան ուսումնական օրացույցով: Դրանով որոշված ճամբարների, ուսումնական ստուգատեսների, Հանրակրթական Դիջիտեքի, մեդիաօլիմպիադաների, ծեսերի և տոների սահմանված կարգով մասնակցությունը պարտադիր ուսումնական աշխատանք է:
9. Ուսումնական շաբաթը 6-օրյա է: Շաբաթ օրերը հատկացվում են հայրենագիտական, ուսումնական ճամփորդությունները, ուսումնական-հասարակական նախագծերը, լրացուցիչ կրթության պարապմունքները կազմակերպելուն:

10. Ուսումնական օրն սկսվում է Ծրագրի 15 րոպե տևողությամբ առավոտյան ընդհանուր պարապմունքով՝ սահմանված կարգով և ծրագրով: Պարապմունքի կազմակերպումը սովորողների ուսումնական-հասարակական նախագիծն է:
11. Ուսուցումը կազմակերպվում է տանը և դպրոցում ուսուցողական թվային միջոցների կիրառմամբ: Սովորողը տանն ունի համացանցին միացած համակարգիչ: Ծրագիրը դպրոցում ապահովում է համացանցից, համակարգչից, էլեկտրոնային գրատախտակից, էլեկտրոնային գրիչներից, ձայնագրիչից, ֆոտոխցիկից, բջջային հեռախոսից ուսումնական նպատակներով օգտվելու հնարավորություն: Ուսումնական առաջադրանքները և դրանց պատասխանները կարող են ներկայացվել նաև էլեկտրոնային եղանակով:
12. Սովորողը կրթահամալիրի գրադարանի, այդ թվում՝ մեդիանյութերի և միջոցների բաժանորդն է: Գրադարանը սահմանված կարգով տանը և դպրոցում ապահովում է անհրաժեշտ ուսումնական տպագիր և էլեկտրոնային նյութերով, միջոցներով:
13. Կրթահամալիրի կայքին հետևելը և կայքի աշխատանքին մասնակցելը սովորողի պարտադիր ուսումնական աշխատանք է:
14. Դասաժամերի բացթյա կազմակերպումը դիտվում է որպես սովորողի իրավունքների իրագործում:
15. Սահմանված կարգով իրականացվող ուսումնական ճամփորդությունները դասընթացների բաղկացուցիչն են: Սովորողի մասնակցությունը այդ ճամփորդություններին պարտադիր է:
16. Սովորողները սահմանված կարգով մասնակցում են շրջապատի կամ նյութական միջավայրի բարելավմանն ուղղված նախագծերի իրականացմանը: Այդ աշխատանքը ուսումնական ծանրաբեռնվածության մաս չի կազմում: Աշխատանքը ստանում է համապատասխան գրանցում:
17. Սովորողները սահմանված կարգով մասնակցում են պարտադիր ինքնասպասարկմանը՝ հիգիենիկ պահանջների պահպանում, ուսումնական տարածքի և գույքի խնամք: Այդ աշխատանքը ուսումնական ծանրաբեռնվածության մաս չի կազմում: Աշխատանքը ստանում է համապատասխան գրանցում:
18. Էլեկտրոնային օրագրի վարումը 7-9-րդ դասարանցիներ համար պարտադիր ուսումնական աշխատանք է:
19. Տևականշրջան Հայաստանից բացակայած կամ տարբեր պատճառներով ուսումնական ծրագիրը չյուրացրած սովորողների համար սահմանված կարգով կազմակերպվում է անհատական ուսումնական պլանով ու ծրագրերով ուսուցում:
20. Հայոց լեզու առարկան ներառում է գործնական քերականություն և խոսքի մշակույթ:
21. Գրաբարի ուսուցումը կազմակերպվում է Նոր Կտակարանի ընթերցման միջոցով՝ որպես հայ առաքելական եկեղեցական ծեսի լեզու:
22. «Միջին հայերենն» ու «Գրական արևմտահայերենը» ուսուցանվում են գործնականում՝ գրական ստեղծագործությունների հիման վրա:
23. «Մաթեմատիկա» ուսումնական բնագավառը ներկայացվում է «Երկրաչափություն», «Հանրահաշիվ» առարկաներով և «Տեխնոլոգիա» բնագավառի «Գծագրություն» դասընթացով:
24. «Կենսաբանություն» առարկան կազմված է երեք դասընթացից՝ «Բուսաբանություն», «Կենդանաբանություն» և «Մարդու անատոմիա», իր մեջ ներառում է էկոլոգիայի բաղկացուցիչ և ուսուցանվում է փորձի հիման վրա:
25. Սովորողը հանրակրթական դասընթացների և իր ընտրությամբ գործունեության ժամանակ գործնականում կիրառում է օտար լեզուներ: 9-րդ դասարանն ավարտողը

գործնականում տիրապետում է ռուսերենին և այն գործածում է իր հետագա գործունեության մեջ:

26. «Ֆիզիկա», «Քիմիա» առարկաների ուսուցումը կազմակերպվում է լաբորատորիաներում՝ փորձի հիման վրա, ՏՀՏ օգտագործմամբ:
27. «Տեխնոլոգիա» առարկան կազմված է«Մեդիատեխնոլոգիաներ», «Տնային տնտեսվարություն», «Բույսերի խնամք», «Կենդանիների խնամք», «Դիզայն», «Առողջագիտություն», «Գծագրություն», «Մաշկի և մազերի խնամք», «Թվային միջոցների սպասարկում», «Մեդիագրադարան», «Դիզայն-խեցեգործություն» դասընթացներից. կազմակերպվում է գործնական աշխատանքի ձևով:
28. «Արվեստ» առարկան կազմված է «Կերպարվեստ» և «Երաժշտություն» բաղադրիչներից: «Արվեստ» առարկայի համապատասխան բաղկացուցիչն ընդգրկում է կինոդիտում, թատրոն, թանգարաններ և վիրտուալ ցուցադրություններ, ծեսի և տոնի կազմակերպում, դասական երաժշտության համերգների ունկդրում:
29. «Հասարակագիտություն» առարկան ընդգրկում է «Բարոյագիտություն», «Մարդու իրավունք» բաղադրիչները:
30. «Մարմնակրթություն և անվտանգ կենսագործունեություն» առարկան սովորողի ընտրած մարզաձևն է. Սովորողը մասնակցում է թիմային պարապմունքներին:
31. 7-9-րդ դասարաններում սովորողը սահմանված կարգով իր ընտրությամբ գործունեություն է իրականացնում՝ մաթեմատիկա և ծրագրավորում, բնագիտական գործունեություն, ինժեներական-տեխնիկական ստեղծագործություն, կինո-ֆոտոգործ, մեդիալրագրություն, անգլերեն և թարգմանչություն, ռուսերեն և թարգմանչություն, հայրենագիտություն և էքսկուրսավարություն, կենդանիների խնամք, բույսերի խնամք, կերպարվեստ, դիզայն և մոդելավորում, երաժշտական գործունեություն, տեխնոլոգիա-դիզայն, մարզական գործունեություն, թատրոն:
32. Լրացուցիչ կրթության դասընթացների՝ օտար լեզվի (անգլերեն, վրացերեն, ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, թուրքերեն, պարսկերեն, արաբերեն), մաթեմատիկայի, տեխնիկականստեղծագործության, ֆիզիկայի, քիմիայի, աստղագիտության, էկոլոգիայի, կինո-ֆոտոգործի, համակարգչային գրաֆիկայի, համակարգչային կիրառական ծրագրերի, էլեկտրոնային գրատախտակի, դաշնամուրի, ազգային նվագարանի, վոկալի, պարի, կերպարվեստի, քանդակի, խեցեգործության, կարուձևի, կարպետ-գոբելենի, փայտամշակում-մետաղամշակման, ծաղիկների և բույսերի մշակում-ձևավորման, խոհարարության, շախմատի, մարզաձևի (լող, ֆուտբոլ, բասկետբոլ, ձեռքի գնդակ, վոլեյբոլ, սեղանի թենիս, գեղարվեստական մարմնամարզություն, թեթև ատլետիկա), պարի և այլ դասընթացների կազմակերպման համար սովորողի ծնողի հետ կնքվում է լրացուցիչ կրթության պայմանագիր՝ որպես ուսումնառության պայմանագրի հավելված:
33. Ուսումնական պլանի և ուսումնական ծրագրերի կատարողականն արտացոլվում է դպրոցի ղեկավարի, դասավանդողների և սովորողների էլեկտրոնային օրագրերում և սահմանված կարգով ներկայացվող էլեկտրոնային կիսամյակային հաշվետվություններում:
34. Կիրառվում են գնահատման տարբեր ձևեր, որոնք բերվում են 10 միավորանոց համակարգի: Գնահատման հիմքում դրվում են սովորողի անհատապես և խմբով կատարած աշխատանքների թղթապանակը (այդ թվում՝ ինքնաստուգումներ, ընթացիկ և կիսամյակային ամփոփիչ ստուգումներ, հեռավար առաջադրանքների կատարում, հետազոտական-ստեղծագործական աշխատանք, ուսումնական կայքի

աշխատանք, ուսումնա-հասարակական նախագծեր, ուսումնական ճամփորդություններ, հայրենագիտական արշավներ, ստեղծագործական ստուգատեսներին, հավաքներին, օլիմպիադաներին, այդ թվում՝ մեդիա, ցուցահանդեսներին, փառատոներին մասնակցություն), ամսական և կիսամյակային հաշվետվությունները: Կիսամյակային գնահատականի մեջ գործունեության յուրաքանչյուր 10 միավորանոց սանդղակով գնահատվող ձևը մտնում է իր կշռային գործակցով: Կարող են գործել դասընթացի ծրագրով նախատեսված գնահատման այլ ձևեր: Խրախուսվում է սովորողի ուսումնական գործունեության ինքնահսկման և ինքնաստուգման ձևերի կիրառումը և հրապարակայնացումը մեդիայի միջոցով:

35. Ուսումնառության արդյունքում սովորողի ստեղծած մեդիանյութերը սահմանված կարգով տեղադրվում են կրթահամալիրի կայքում, ընդգրկվում ժողովածուներում, հրատարակվում առանձին, պահվում գրադարանում:
36. Սովորողի ստեղծած այլ տեսակի արդյունքները սահմանված կարգով ներկայացվում են ցուցադրություններում, ցուցահանդեսներում, ստեղծագործական հավաքներում:
37. 9-րդ դասարանի վերջում սովորողները հանձնում են ավարտական քննություններ՝ ԿԳ նախարարության սահմանած կարգով: